ԵՂԵՌՆԱՊՈՒՐԾ ՄԱՍՈՒՆՔ. ՎԱՎԵՐԱԳԻՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Պատմագրության յուրօրինակ սկզբնաղբյուրներ են թանգարանները, ուր մուտք գործած յուրաքանչյուր առարկա ակընկալում է բազմակողմանի և ճշգրիտ արժեվորում: Թանգարանային ցուցանմուշների շարքում կան նաև եզակիները՝ որոնք դադարում են առարկա լինելուց, դառնում են պատմական փաստերի, իրողությունների վկա ու հիմնաղբյուր: Նման մի մասունք է Հայաստանի պատմության պետական թանգարանի ՆՊՖ-948 համարի փաստավավերագիր ուլունքաշար համրիչը, որի 99 հատիկներին առկա են Հայոց Մեծ եղեռնի առաջին իսկ՝ ապրիլի 11/24-ի Պոլսո հավաքի և Անատոլիայի Չանղրը աքսորավայր քշված մտավորականների ազգանունները, երբեմն միայն անունները: Այն փորագրել է 71-րդ հատի անվանակիր մուխթար Վարդերես Աքանասյանը, Հայոց մայր թանգարանին է նվիրել նահատակի Փարիզից հայրենադարձված դուստրը՝ Էժենի Աքանասյան-Գյուլբոլյանը: 55 և 86-րդ հատերին փորագրված է նաև 2 և 4 թվերը, որ նշանակում է 2 և 4 անձ. ասել է՝ համրիչը վկայագիր է 103 աքսորականի վերաբերյալ: Առաջին անհամաչափ հատին արձանագրված է «Չանղրը 1915, Ապրիլ 11, Յիշատակ»: Ապա՝ համրիչի հատերից յուրաքանչյուրին փորագրված են աքսորյալների անվանումները: Ահա այդ անվանացանկը:*

1. Կոմիտաս Վ., 2. Յովհան Վ., 3. Քաջունի քհնյ., 4. Ճէվահիրճի, 5. Ռ. Մեւակ, 6. Միսքճեան, 7. Թօփճեան, 8. Վարդան քհնյ., 9. Գ. Ճէլալ, 10. Գազազեան, 11. Թորգոմեան - բժիշկ, 12. Պօղոսեան, 13. Տինանեան, 14. Միրզա, 15. Ալբունեան - ատամնաբույժ, 16. Կիւլիստան, 17. Զարեհ, 18. Եզնիկ, 19. Ասատուր Վ. - դեղագործ, 20. Մանիկեան, 21. Զարիֆեան, 22. Միսքճեան, 23. Հաճեան, 24. Ղազարոս, 25. Թէրզեան, 26. Նշան, 27. Նարկիլէճեան, 28. Արսենեան, 29. Դանիէլեան Պ. - փազտաբան, 30. Չերազ, 31. Մովսէս, 32. Տ. Քէլէկ – խմբագիր, 33. Բ. Քէչեան, 34. Թօփճեան, 35. Անտոնեան, 36. Թօլայեան, 37. Շահնուր, 38. Ս. Սրենց – ուսուցիչ, 39. Խօճասարեան, 40. Վարուժան, 41. Շամտանճեան, 42. Չավուշեան, 43. Թապագեան, 44. Տիրու-

* Համարակալումը՝ 1-99, մեր կողմից կատարված է անվանակիրներին վկայակոչելու նպատակով: Այստեղ և ներքո անվանումները բերված են ըստ սկզբնաղբյուրների ուղղագրության:

նի, 45. Աղապապեան, 46. Բարսեղեան, 47. Տօրեան, 48. Եսայեան – տաղարտող, 49. Գոչո Արթին, 50. Երջանիկ, 51. Զենոբ, 52. Խաչիկ, 53. Հրանդ, 54. Երևում, 55. Լևոն-2, 56. Ազրիկ, 57. Գանթարեան, 58. Կոզմոս, 59. Պէյլերեան, 60. Թաշճեան, 61. Հանեսեան, 62. Արամ, 63. Մելիք, 64. Տէօվլեթեան, 65. Քէհեաեան - արհեստատոր, 66. Մաղուզաճեան, 67. Պասմաճեան, 68. Մելքոնեան, 69. Զպճը - ճարտարապետ, 70. Արսլանեան, 71. Վարդերես – մուխթար, 72. Ֆէրուխան, 73. Սարաֆեան, 74. Ալթունեան, 75. Ճամպազ, 76. Հրաչ, 77. Մոմճեան, 78. Գալէնտէր, 79. Վաղինակ, 80. Գալֆայեան – պաշտօնեայ, 81. Պէյլերեան, 82. Պարոյր, 83. Նոյիկ – յանձնակատար, 84. Թաքարեան, 85. Քէօլէեան, 86. Օհնիկեանք-4, 87. Թէրլէմէզ - սեղանատոր, 88. Տէր-Գէորգեան, 89. Պասմաճեան, 90. Գայրզճեան, 91. Ինճիճեան, 92. Գարակէօզեան, 93. Մանեասեան, 94. Ղոնչէկիլ, 95. Փարիսեան, 96. Յ. Գորեան – վճռկն, 97. Քերոբեան – պատուելի, 98. Թումաճան, 99. Պալազեան – ծ.վ.:

Մեր տեսական պրպտումների սկզբում, հուշագիր տեղեկատվությամբ, հիմք ունենալով համրիչի 99-րդ հատի անվանակիր, վերապրող Գրիգորիս ծայրագույն վարդապետ Պալաքյանի «Հայ Գողգոթան» վավերագիրքը[1], կարողացանք ճշգրտված ներկայացնել աքսորականների տարագրության տառապալից ուղին, որ է. Չանկըրի - Չորում - Եոզկատ - Պօղազլիան - Կեսարիա - Թոմարզա - Կազպէլ - Հաճըն - Սիս - Կարսպազար - Օսմանիյէ - Հասանպէյլի - Իսլահիյէ, մինչ՝ Հալեպ (մինչև այն հանգրվանը, որտեղից 1916թ. ապրիլի 2-ին հաջողվում է Գրիգորիս ծ.վ. Պալաքյանի փախուստը Պելեմետիկ):[2] Հետագա որոնումների ընթացքում նպատակ ունեինք պարզաբանել յուրաքանչյուր աքսորականի ինքնությունն ու անհատական Գողգոթան: Ի նպաստ այս ձեռնարկման հայտով դիմել ենք Սփյուռքին[3], հանդես ենք եկել ռադիո-հեռուստատեսային հաղորդումներով, կապ ենք հաստատել նամակագրությամբ, մասնավոր հանդիպումներով: Արձագանքները սուղ, բայց նշանակալի էին: Շնորհիվ հանգուցյալ Էժենի Աթանասյան-Գյուլբոլյանի բարեկամուհու՝ տիկին Մարգարիտ Բարսեղյանի բարյացկամության այսօր ունենք նրա և քրոջ՝ Շամիրամ Աթանասյանի համատեղ լուսանկարը: Համրիչի 4-րդ հատի անվանակրի թոռան, նույնանուն պարոն Միսաք Ճնահիրճյանի միջոցով ձեռք բերեցինք պապի կենսագրությունը և միակ լուսանկարը:[4] 30-րդ հատի անվանակրի մասին, դարձյալ միակ լուսանկարով, մանրամասն հաղորդեց թոռնուհին՝ տիկին Բյուրակն Անդրեասյան-Չերազը:[5] Պարոն Մ. Ճնահիրճյանը տրամադրեց նաև 1965թ. Թուրքիայում հրատարակված հանրագիտակ-պրակը՝ Չանդրրի վերաբերյալ տեղեկատվությամբ, համայնապատկերով ու քարտեզով, նաև 1953թ. հրատարակված Հայտար փաշայի տեղեկատուն: Որոնումների ընթացքում օգտակար եղան Հ. Սկրտիչ Պոտուրյանի «Հայ հանրագիտակ»-ը[6], Գառնիկ Ստեփանյանի կենսագրական եռահատոր բառարանը:[7] Անդրադարձը ՀՍՀ և «Հայկական հարց» հանրագիտարաններին[8] անակնկալների հանգեցրեց: Եթե առաջինում թերացումը քիչ թե շատ հասկանալի էր, մյուս պարագայում՝ անբացատրելի մնաց: Այաշը և Չաղրրը, որպես աքսորավայրեր ներկայացված չեն՝ թեկուզ երկտող տեղեկատվությամբ: Եղեռնի, մանավանդ աքսորի և աքսորականների վերաբերյալ առկա տեղեկությունները մակերեսային են, վրիպումներով: Օրինակ՝ Ռուբեն Սևակի մասին (համրիչի N 5 հատի անվանակիր) բառացի կարդում ենք. «Ձերբակալվել է և աքսորի ճանապարհին (Այաշ), գազանաբար սպանվել այն խմբի (մեկնելուց 24 ժամ անց Կ. Պոլսից ստացվել է հիշյալ

խմբին ազատ արձակելու վերաբերյալ հեռագիր) հետ, որի մեջ էին Սիամանթոն և Վարուժանը»:[9] Պարզենք իսկությունը: Սիամանթոն Այաշի աքսորական էր. հրատարակված են մորը, քրոջն ու եղբորը հղած նրա նամակներն այնտեղից:[10] Ռ. Սևակն աքսորվել է ոչ թե Այաշ, այլ Չանղրը, և ոչ իսկ առաջին խմբի հետ, այլ առանձին, ինչպես տեղեկանում ենք Թեոդիկի «Յուշարձան Ապրիլ տասնըմէկի» հրատարակությունից[11] (1919թ. այս հրատարակության էջերում իսկ, թերևս տեղեկատվության սղության պատճառով, Չանղրը հիշատակվում է երկու դեպքում):[12]

Թեոդիկի 1907-1929թթ. «Տարեցոյց»-ների[13] էջերում բարեխիղճ մանրամասնությամբ տրվում է պոլսահայ կյանքն իր ընթացիկով, հետպատերազմյան շրջանում առանձնապես ուշագրավ փաստանյութով ու հուշագիր, այդ թվում և Չանղրրի վերաբերյալ հուշերով, երբեմն թվացյալ հակասություններով, որոնք, սակայն, լուսաբանվում են համադիր, համակողմանի վերլուծությամբ: Օրինակ, աքսորականների թվական տատանումը՝ 150-300: Պարզվում է, նրանք աքսորավայր են հասել երկու խմբով[14], նույնիսկ առանձին, ինչպես Ռ. Սևակի դեպքում է: Սեննան-Քէոյից Այաշի սպանդ քշված 71-ը[15] ներառյալ՝ այդ թիվն անցնում է 300-ից:

Խոսուն են համրիչին առկա անվանացանկի Հայոց ցեղասպանության վերապրածների հուշերը՝ առավել ևս այսօր, որպես ցեղասպանության վավերագրեր, նաև որպես համրիչին արձանագրված աքսորականներին առնչվող փաստերի վերծանման աղբյուրներ: Ահա դրանք. Գրիգորիս ծայրագույն վարդապետ Պալաքյանի (համրիչի N 99 հատի ազգանվանակիր) «Հայ Գողգոթան»[16] վավերագիրքը, Բյուզանդ Քեչյանի (համրիչի N 33 հատի ազգանվանակիր) «Դրուագ աքսորի շրջանէն»[17], Միքայել Շամտանճյանի (համրիչի N 41 հատի ազգանվանակիր) «Չանղրրէն վերյիշումներ»[18], «Հայ մտքին հարքը Եղեռնին»[19], Օհաննես Թերլեմեզյանի (համրիչի N 87 հատի ազգանվանակիր) «Պոլիս. մտաւորականներու ձերբակալութիւնը եւ աքսորը»[20], Հովհան Կարապետյանի (համրիչի N 2 հատի անվանակիր) «Էջ մը աքսորականի հիշատակներէս»[21] հուշագրությունները:

Թեոդիկի «Տարեցոյց»-ի 1916-1920թթ. համահավաքում հնարավորինս ի մի է գալիս թե՛ Այաշից, թե՛ Չանղրրից դիմումով, կամ զինադադարից հետո վերադարձած աքսորականների ամփոփ անվանացանկը, որոնցից չանղրրականներինը ներկայացնում ենք ստորև:

«Ա. - Զինադադարէն վերջ դարձողներ

Գրիգորիս Վ. Պալաքեան (Չանղրիի տեղացի Հայութեան հետ տեղահան, յետոյ աշխարհականի տարազով ապաստանած Պէլէմէտիկ-Ատանա) [համրիչի N 99 հատի ազգանվանակիր], Յովհան վրդ. (Չանղրի-Ուշագ) [համրիչի N 2 հատի անվանակիր], Ֆէրիքէօյի Վարդան քահանան (նոյնպէս) [համրիչի N 8 հատի անվանակիր], Գասպար Չերազ (Չանղրի-Ուշագ) [համրիչի N 30 հատի ազգանվանակիր], Արամ Անտոնեան (Չանղրիէն Էնկիւրի տարուած պահուն սրունքը կոտրելով՝ ճամբան թողուած, Թարսուս-Հալէպ) [համրիչի N 35 հատի ազգանվանակիր], Սարգիս Սրենց (Չանղրի, Գօնիա, յետոյ Պոլիս՝ ծուարած) [համրիչի N 38 հատի անվանակիր], Մ. Շամտանճեան (Չանղրի-Ուշագ) [համրիչի N 41 հատի ազգանվանակիր], դեղագործ Գ. Հաճեան (Չանղրի) [համրիչի N 23 հատի ազգանվանակիր], առեւտր. դասէն՝ Ստ. Թաքարեան (Չանղրի, Կեսարիա՝ ուր ականատես կախաղաններուն, յետոյ Հալէպ) [համրիչի N 84 հատի ազգանվանակիր]»:[22]

«Գ. - Դիմումներով աքսորէ դարձողներ

Կոմիտաս վարդապետ [համրիչի N 1 հատի անվանակիր], Բիւզանդ Քէչեան [համրիչի N 33 հատի ազգանվանակիր], տքք. Վ. Թորգոմեան [համրիչի N 11 հատի ազգանվանակիր], տքք. Տինանեան [համրիչի N 13 հատի ազգանվանակիր], Հայկ Խօճասարեան [համրիչի N 39 հատի ազգանվանակիր], Նշան Գալֆաեան [համրիչի N 26 հատի անվանակիր], Ե. Թօլայեան [համրիչի N 36 հատի ազգանվանակիր], Ա. Գալէնտէր [համրիչի N 78 հատի ազգանվանակիր], Նոյիկ Տ. Ստեփանեան [համրիչի N 83 հատի անվանակիր], դերձակ Վրթանէս Փափազեան (համանուն վիպասանին հետ շփոթուած) [համրիչին այս անունը չկա - Կ. Ա.][23], Ինճիճեան [համրիչի N 91 հատի ազգանվանակիր], Պէյլէրեան որդի [համրիչի N 59 կամ N 81 հատի ազգանվանակիր]»:[24]

Ըստ մեր պրպտումների՝ դիմումով վերջին ազատվողներն են եղել համրիչի NN15, 87 և 96 հատերի ազգանվանակիրները՝ ատամնաբույժ Ալթունյանը, սեղանավոր (դրամափոխ) Թերլեմեզը, վաճառական Գորեյանը, որոնք, սակայն, աքսորավայրից դուրս գալով 1915թ. օգոստոսի 6-ին, Էնկյուրիում բանտարկվել են, քշվել՝ Տարսոն, այնտեղից Պոլիս են հասել սեպտեմբերի 22-ին:[25]

Թեոդիկի «Տարեցոյց»-ի էջերում առկա են նաև խմբագրական անդրադարձներ, հայրենակցի կամ հարազատի փնտրտուքի դրվագներ, որոնց թվում գտնում ենք նաև խնդրո առարկա համրիչին արձանագրված անձանց առնչվող փաստեր: Այսպես՝ 1921թ. «Տարեցոյց»-ի խմբագրականը՝ «Խլեակ մը «Մեծ կարաւան»-էն» վերտառությամբ, Վահրամ Ասատուրյանի (համրիչի N 19 հատի անվանակիր) մասին է: Պարզվում է, որ վերջինս Կետիկ-փաշայից է, Չանղըրըից Մեսքենե հասած վերապրող: Ավելորդ չէ մեջբերել նույն խմբագրականի հարցադրումը. «Կրնա՞նք երջանիկ սեպել զանո՛նք, որ տառապանքի նոյն սկզբնաւորութիւնն ու շարունակութիւնն ունեցան, բայց որ դարձան վերստին, այսինքն «անցան ընդ հուր և ընդ սուր» ու տեսան մահագին ոգորումներն իրենց ցեղին զաւակներուն՝ թշուառութեան մագիլներէն աքցանուած: Մեզ համար, անձնիւր վերապրող՝ կենդանի պատմութիւնն է վերջին Հայ Մարտիրոսութեան, որ ամբողջ ընդհանուր Ազգաց պատմութեան մէջ իր նմա՛նը չունի»:[26] Ուշագրավ է նաև, ցավոք մեզանում նվազ հայտնի՝ արևմտահայ գրող, թարգմանիչ, խմբագիր՝ աքսորյալ-վերապրող Միքայել Շամտանճյանի (համրիչի N 41 հատի ազգանվանակիր) անմիջական մտորումն այս կապակցությամբ. «Սիրելի բացականերու վրայ խօսիլը, դարպաս մըն է անոնց յիշատակին: Իսկ ինձի համար, Չանղըրըի վրայ խօսիլը, որ ա՛լ յաւիտենական բացական է, ապրիլ է այն սարսափը, որ ամէնուս եղաւ. անոնք՝ սարսափէն յետոյ, գացին կորուստի ճամբան, ու ինձի, թերեւս նախասահմանութեամբ մը, տրուեցաւ վերապրիլ, և խղճմտանքիս մէջ սգալ անոնց կորուստը»:[27]

Ահա մի դրվագ ևս՝ նույն վերապրողի՝ Միքայել Շամտանճյանի «Զգացողութիւններ...»-ից. «Սկիւտար, 30 սեպտ. 1919 թվակիր: Մեռելներէն վերջ զորս կը թաղենք, ճակատագրականօրէն վատութիւն մըն է որ կը գործենք, նորէն քալելով այն հողերուն վրայ, ուրկէ անոնք անցան, և նորէն ապրելով կապոյտ երաւզը կեանքին, ուրկէ անոնք թերեւս բերկրեցան: Ինչպէ՞ս ապրիլ առանց վատութեան, երբ անգամ մը սիրելիներուդ գերեզմանակոյտերը յարդարած, անողոք աշխարհին ճամբաներէն պիտի ընթանաս»:[28]

Եվս մի հավաստագիր-հուշագրություն՝ «Առնակ» ստորագրությամբ՝ Իսրայել Տխրունու (համրիչի N 44 հատի անվանակիր) մասին. «11 Մայիս 1916-ին մեր քաղքէն [Կոտինայից – Կ. Ա.] կանցնէր 20-25 հոգինոց խումբի մը հետ, Միջագետքի մահասփիւռ անապատները երթալու համար: Չէի կրնար հաւատալ, թէ Տխրունի՝ իբրեւ մին Ապրիլ 11-ի Չանկրը աքսորեալներէն՝ ճողոպրած ըլլար անոնց բնաջնջումէն: ... կը սրսփար բոկոտն ու կիսամերկ... դատապարտեալ հետիոտն աքսորի»:[29] Ուշագրավ մի փաստ. այս վիճակում իսկ բանաստեղծը, կորստից փրկելու հույսով երեք քերթված հանձնում է հուշագրին, որոնցից մեկը՝ դեկտեմբեր, 1915 թվակիր, վերջինս ուղարկում է Թեոդիկին:[30]

Նույն հատորյակում զետեղված է Զենոբ Սուրենյանի նամակ-դիմումը՝ Թեոդիկին, որով իր եղբոր, բանաստեղծ Հրաչյա Սուրենյանի (նույն ինքն՝ Արմեն Տորյան, համրիչի N 47 հատի անվանակիր) վերաբերյալ հիշողություններ է ակնկալում վերապրողներից:[31] Ի արձագանք այս դիմումի ներկայացված է Նշան Գալֆայանի (համրիչի N 26 հատի անվանակիր) հուշածվենը, հույժ կարևորվող տեղեկատվությամբ՝ այն է. «Չանղրրի աքսորավայրիս մէջ ճանչցայ Տօրեանը (համրիչի N 47 հատի ազգանվանակիր). 2-րդ խումբին հետ եկած նետուած էր հոն, Փարիզէն Պոլիս եւ հոնկէ ալ լէպլէպիճիներու հայրենիքը. կ՚անգիտանար, թէ ինչո՞ւ քերած ձգած էին զինք այդ կիսավայրենի քաղաքը՝ որուն քիչ յետոյ կառավարիչ կարգուեցաւ Տէօրթ-Եօլի երբեմնի կառավարիչ հրէշ Ասաֆը: Բախտն այնպէս բերաւ որ «Գայսէրի փողոց»-ին յոյն տան մը մէջ պահ մը բնակակից ըլլամ երիտասարդ քերթողին, տարաբախտ Քաջունի քահանայի [համրիչի N 3 հատի ազգանվանակիր], դեղագործ Յ. Թէրզեանի [համրիչի N 25 հատի ազգանվանակիր], վաճառական Ներսէս Գէորգեանի [համրիչի N 88 հատի ազգանվանակիր], հօրեղբօրորդւոյս՝ Յարութիւնի [համրիչի N 80 հատի ազգանվանակիր] եւ խումբ մը սկիւտարցիներու: Շատ անգամ գրական ու գեղարուեստական հաւաքումներ կը սարքէինք՝ մեր ընդարձակ եւ օդաւէտ բնակարանին մէջ. Տօրեան իր ֆրնս. քերթուածներէն արտասանութիւններ կ՚ընէր՝ հիացընելով բոլորս ալ... Սկիւտարցի Ճէրրահ Գէորգի տղան ալ [հավանական է՝ Ֆերուխանը, համրիչի N 72 հատի անվանակիր, կամ՝ աքսորյալների մեջ եղել է մեկ այլ ջութակահար – Կ. Ա.] իր ջութակով հաճելի պէսպիսութիւն մը կ՚աւելցընէր այս գրական ասուլիսին վրայ»:[32]

Խնդրո առարկա համրիչին առնչվող՝ մեր հետազոտությանն ի նպաստ՝ մի շարք վկայություններ կան Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանի ֆոնդերում: Այսպես՝ մեմորիալ բաժնում Արշակ Ալպոյաճյանի հայ եկեղեցական, մտավորական և ազգային գործիչ նահատակների ցանկն ընդգրկում է համրիչի քսանվեց աքսորականների անուն-ազգանունները՝ Կոմիտաս վարդապետ (համրիչի N 1 հատի անվանակիր) Սողոմոնեան, Յուսիկ քահանա Քաջունի (համրիչի N 3 հատի ազգանվանակիր), բժիշկ Ռուբէն Չիլինկիրեան (Սեւակ՝ համրիչի N 5 հատի անվանակիր), բժիշկ Ստեփան Միսքճեան (համրիչի N 6 հատի ազգանվանակիր), Գրիգոր Միսքճեան (համրիչի N 22 հատի ազգանվանակիր), Յ[ակոբ] Թէրզեան (համրիչի N 25 հատի ազգանվանակիր), Ասատուր Արսէնեան (համրիչի N 28 հատի ազգանվանակիր), Պօղոս Դանիէլեան (համրիչի N 29 հատի ազգանվանակիր), Տիրան Քէլէկեան (համրիչի N 32 հատի ազգանվանակիր), Ներսէս Շահնուր (համրիչի N 37 հատի ազգանվանակիր), Դանիէլ Վարուժան (համրիչի N 40 հատի անվանակիր),

Երուանդ Չավուշեան (համրիչի N 42 հատի ազգանվանակիր), Միհրան Թապագեան (համրիչի N 43 հատի ազգանվանակիր), Արիս Իսրաէլեան (համրիչի N 44 հատի անվանակիրը՝ Տխրունի), Լեւոն Աղապապեան (համրիչի N 45 հատի ազգանվանակիր), Արմէն Տօրեան (համրիչի N 47 հատի ազգանվանակիր), Արամ Երջանիկ (համրիչի N 50 հատի անվանակիր), Հրանդ Մ. Կիւրճեան (համրիչի N 53 հատի անվանակիր), Օննիկ Մաղազաճեան (համրիչի N 66 հատի ազգանվանակիր), Յարութիւն Գալֆայեան (համրիչի N 80 հատի ազգանվանակիր), Հայկ Թիրեաքեան (Հրաչ) (համրիչի N 76 հատի անվանակիր), Գէորգ Քէօլէեան (համրիչի N 85 հատի ազգանվանակիր), Գրիգոր Օհնիկեան, Մկրտիչ Օհնիկեան, Յովհաննէս Օհնիկեան (համրիչի N 86՝ Օհնիկեանք-4, նույն ազգանվանակիրներից երեքը), Սամուէլ Թոմաճեան (համրիչի N 98 հատի ազգանվանակիր):[33]

Ուշագրավ է մեծն Կոմիտասին վերաբերող ծանոթագրությունն այստեղ. «Ծանօթ. – Նահատակներու անուանացանկին մէջ դրուած է նաեւ Կոմիտաս վարդապետը, որ ֆիզիքապէս ողջ վերադարձած է աքսորէն եւ բանտերէն, սակայն, ի գործ դրուած չարչարանքներու հետեւանքով՝ հոգեպէս ան խիստ վնասուած ըլլալով, յարմար տեսանք զայն եւս նահատակներու կարգը դասել»:[34]

ԳԱԹ-ի Վահրամ Թորգոմյանի (համրիչի N 11 հատի ազգանվանակիր), ֆոնդում է գտնվում վերջինիս՝ աքսորից ազատարձակման հրամանագիրը՝ (պատճենը) և դեռ հետագա ուսումնասիրություն են ակնկալում նրա թուրքերեն երկտողերը Մեթթերհանեից ու Չանղըրըից, որդու և կնոջ պատասխանները:[35] Հիշարժան են նաև 1918թ. դեկտեմբերի 10-ին և 16-ին Արշակ Չոպանյանին հղված նրա նամակները[36], որոնք անդրադարձ են և՛ անցած արհավիրքին՝ Այաշի և Չանղըրըի հիշատակությամբ, և՛ օրախնդիր հարցերի՝ հատկապես «Հայկական լիկ»-ի կազմակերպման կապակցությամբ, այն դիտելով որպես Ազգային խորհուրդ, խորհրդակցական ժողով՝ բեկված ժողովրդի ուժերը համախմբելու, կուսակցական ընդհանուր համերաշխություն ապահովելու, Հայ դատի պաշտպանության նպատակադրությամբ:

Ուշագրավ են նաև Դանիել Վարուժանին (համրիչի N 40 հատի անվանակիր) առնչվող նյութերը, որոնք հիմնականում ամփոփագրել, ծանոթագրել ու հրատարակել է Ա. Շարարյանը:[37] Դրանք են. Վերժին Էքսերճյանի «Հանդիպումս Դանիել Վարուժանի հետ»[38], Հովհաննես Պողոսյանի «Վարուժանի վերջին գիշերը»[39], Արամ Անտոնյանի (համրիչի N 35 հատի ազգանվանակիր) «Վարուժանն աքսորյալ»[40], Հովհան Կարապետյանի (համրիչի N 2 հատի անվանակիր) «Էջ մը աքսորականի հիշատակներես»[41], «Կառապանի մը պատմությունը»[42] հուշագրությունները, որոնք մանրամասնում են ողբերգական իրողությունը:

Ավելացնենք, որ Չանղըրըին, որպես Ապրիլ 11/24-ի աքսորյալների հանգրվանի, անդրադարձել է նաև Հ. Ճ. Սիրունին՝ իր «Կոմիտասին հետ» աշխատության էջերում:[43]

Վերապրողների հետպատերազմյան գործունեության վերաբերյալ ևս տեղեկանում ենք ինչպես Թեոդիկի «Տարեցոյց»-ներից, այնպես էլ՝ պոլսահայ մամուլից: Այսպես 1918-ին կազմված, 1919-ին՝ վերակազմյալ «Հայկական լիկ»-ում գործում էին Վ. Թորգոմեանը (համրիչի N 11 հատի ազգանվանակիր), Յ. Թօփճեանը (համրիչի N 7, կամ N 34 հատի նույնազգանվանակիրներից՝ մեկը), Յովհան վարդապետը (համրիչի N 2 հատի անվանակիր), Ա. Բարսեղեանը (համրիչի N 46 հատի ազգանվանակիր):[44]

Վերջին տարիների հրապարակումներում ուշադրության է արժանի Արծվի Բախչինյանի «Ծագումով հայեր են» տեղեկատուն, որը ոչ միայն ազգանունների ցանկով բազում համընկումներ ունի համրիչի անվանացանկի հետ, այլև տեղեկություններ է պարունակում նահատակների հետնորդների մասին: Օրինակ՝ Տիրան Քէլէկյանի (համրիչի N 32 հատի ազգանվանակիր) մասին տեղեկատվությունն ամբողջանում է որդու՝ Գրիգոր Քէլէկյանի վերաբերյալ մանրամասնով: Իրոք՝ հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն համրիչի անուն-ազգանվանակիր նահատակներին կամ վերապրողներին, այլև նրանց հետնորդներին, ժառանգներին առընչվող տեղեկությունները: Մասնավորապես՝ Գրիգոր Քէլէկյանը 30-40-ական թվականներին Ֆրանսիայի ջազի ճանաչված դեմքերից էր և համարվում է թուրքական ջազի հիմնադիրը:[45] Վարդերես Աթանասյանի [համրիչի N 71 հատի անվանակիր] դուստրը՝ Էժենի Աթանասյան-Գյուլբուլյանն իր որոշակի ներդրումն է ունեցել Ֆրանսիայի «Հայ ազգային ճակատ»-ի գործունեության ոլորտում:[46] Քաջունի քահանայի (համրիչի N 3 հատի ազգանվանակիր) Եզնիկ և Եղիշե որդիները, Գասպար Չերազի (համրիչի N 30 հատի ազգանվանակիր) որդու՝ Վահանի հետ մեկտեղ Անդրանիկի զորքի կամավորականներն էին[47] (վերջինս՝ Վահանը հետագայում դարձավ ստալինյան բռնադատության զոհ): Ցեղասպանության զոհերի ժառանգների ճակատագրին առնչող ծավալուն այս թեման կարոտ է հետգա ուսումնասիրության:

Ուշագրավ է մեկ այլ փաստ. Հայաստանի հայրենակցական միությունների խորհրդի «Բնօրրան» հանդեսում զետեղված է ՀՀ նախագահի 1995թ. մարտի 6-ի հրամանագիրը՝ Հայաստանում կացության հատուկ կարգավիճակ ստացած սփյուռքահայերի վերաբերյալ՝ շուրջ 286 անուն-ազգանունների ցանկով:[48] 286 ազգանուններից 20-ը համընկնում է Չանդրի աքսորականների ցանկին՝ արձագանքների նոր ակնկալիքներ արթնացնելով: Ի դեպ՝ այս նկատառումով, նույն հանդեսի էջերում ևս հրատարակեցինք համրիչի ազգանվանացանկը:[49]

Գրիգորիս ծայրագույն վարդապետ Պալաքյանը (համրիչի N 99 հատի ազգանվանակիր) իր «Հայ Գողգոթայի» նախամուտում արձանագրում է. «Էր երբեմն, երբ հին զանազան դարերում՝ հայ ազգը հաւաքաբար մէկ պատմութիւն ունէր: Իսկ այս օր ո՞ւ ամէն նահատակուած եւ վերապրող հայ՝ իր մասնաւոր սեւ օրերու պատմութիւնը ունի, եւ այս մէկն է այդ հարիւրհազարատոր պատմութիւններէն... Բայց գրի առի, որովհետեւ սրբազան կտակ մը ունէի, նահատակութեամբ սրբացած քու մեռնող զաւակներէդ»:[50]

Ա՛յս էր նահատակի պատվիրանն ու պատգամը վերապրողին՝ ի ծանուցում գալիք սերունդների:

Ուլունքաշար անվանացանկն՝ առկա պրպտված նկարաշարով այսօր արդեն ինքնին առավել քան խոսուն է: Ի ամփոփումն ներկա հրապարակման՝ ներկայացնում ենք ուլունքաշար համրիչի անվանացանկը, աշխատանքի արդյունքում ի հայտ բերված մեր մեկնաբանումներով, նոր արձագանքների ակնկալությամբ.

1. Կոմիտաս վ. – Սողոմոնյան, ծնվ. Քեոթահյա (1869-1935): Ձերբակալվել է Պոլսում ապրիլի11-ին (հին տոմար), ազատման հրամանը, դիմումով, աքսորավայր է հասել նույն ամսվա 26-ին, 28-ին մեկնելով, Պոլիս է վերադարձել մայիսի 2-ին, միջնորդությամբ Մեճիտ իշխանի և ամերիկյան դեսպան Մորգենթաուի:

2. Յովհան Վ. – Կարապետյան, վերապրող, վերադարձել է զինադադարին՝ Ուշագից, ուր հասել էր Չանղըրից:
3. Քաջունի քինյ – Հուսիկ (1851-1916), արաբկիրցի է, դաշնակցական, վախճանվել է Տէր Զորի ճանապարհին, Մեսքենեի մոտակայքում՝ Համամամ կայանում:
4. Ճէվահիրճի – Միսաք, կեսարացի է (1858-1924), դատաստանական խորհրդի անդամ, բժիշկ: Աքսորից ազատվել է արքունի կանանց (գինեկոլոգ էր) և իր գործընկերոջ Բեսիմ Օմեր փաշայի միջնորդությամբ:
5. Ռ. Սեւակ – Չիլինկիրյան (1885-1915), բանաստեղծ, բժիշկ, հանրային գործիչ: Նահատակվել է Չանղըրի և Գալայճըքի ճանապարհին՝ Թյունե կոչված վայրում (13/26-08.1915):
6. Միսքճեան – Ստեփան (1852-1915), կայս. բժշկանոցից վկայված բժիշկ, մանկաբարձ և վիրաբույժ, Օրթաքեոյի բնակիչ, որի կաթոլիկ եկեղեցու թաղային խորհրդի անդամն էր: Նահատալվել է Էնկուրիի մոտ:
7. Թօփճեան – Հակոբ, ռամկավար, հանրային գործիչ, խմբագիր, վերապրող:
8. Վարդան քինյ – Գարակեոզյան, ֆերիքեոյի քահանա, վերապրող:
9. Գ. Ճէլալ – Գրիգոր, հնչակյան գործիչ, վերապրող:
10. Գազազեան – բժիշկ-դեղագործ, հանրային գործիչ, վերապրող:
11. Թորգոմեան, բժիշկ – Վահրամ (1858-1942), բժիշկ, հանրային գործիչ, վերապրող: Աքսորից ազատվել է Մեճիտ իշխանի (իշխանի անձնական բժիշկնէր) միջնորդությամբ:
12. Պողոսեան – այս ազգանունը կա Գրիգորիս ծայրագույն վարդապետի Այաշի աքսորելոց ցանկում – ջլախյաբույժ, վերապրող (պարզաբանման կարիք կա):
13. Տինանեան – Բարսեղ, բժիշկ, հանրային գործիչ, վերապրող (1919թ. ապրիլի 11-24-ի սգահանդեսի հանձնախմբում էր):
14. Միրզա – Քեթենճյան, դաշնակցական գործիչ, վերապրող, 1920-ին Ուրֆայում թուրքերի դեմ ժողովրդի պայքարը ղեկավարողներից էր:
15. Ալթունեան–ատամնաբույժ – Վահան, ատամնաբույժ, վերապրող: Դիմումով ազատվել է 1915թ. օգոստոսի 6-ին, ճանապարհին՝ բանտարկվել Էնկյուրիում, քշվել Տարսոն, որտեղից Պոլիս է հասել սեպտեմբերի 22-ին:
16. Կիւլիստան – ատամնաբույժ, վերապրող, որի, հավանաբար ազգականը, Մելքոն անունով, Այաշ էր աքսորվել (դարձյալ Պոլիս դարձած):
17. Զարեհ – համրիչն այս անձը վկայող դեռ միակ աղբյուրն է:
18. Եզնիկ – համրիչն այս անձը վկայող դեռևս միակ աղբյուրն է:
19. Ասատուր Վ. – դեղագործ – Վահրամ Ասատուրյան, Կետիկ փաշայից, վերապրող: Մեսքենեում ծառայելով որպես բժշկի օգնական մեծապես օգնել է այդտեղով անցնող տարագիր հայությանը:
20. Մանիկեան – Պետրոս, դեղագործ և հանրային գործիչ, վերապրող:
21. Զարիֆեան – Ավետիս, դեղագործ և հանրային գործիչ, վերապրող:
22. Միսքճեան – Գրիգոր (1865-1915), դեղագործ, նահատակել է բժիշկ եղբոր՝ Ստեփանի հետ (համրիչի N 6 հատի անվանակիր), Էնկյուրիի մոտ:
23. Հաճեան – հայտնի է անվան առաջին տառը՝ Գ., դեղագործ, զինադադարին վերադարձել է:
24. Ղազարոս – համրիչն այս աքսորականի մասին վկայող միակ աղբյուրն է:
25. Թէրզեան – Հակոբ (1879-1915), հաճնցի, դեղագործ, հնչակյան գործիչ, նահատակվել է Էնկյուրիի մոտ:

26. Նշան – Գալֆյան (1865-?), ճարտարագետ, երկրագործ, հանրային գործիչ, վերապրող: 1924թ. տեղափոխվել է Հունաստան, 1927-ին՝ հրավիրվել Իրան, որպես շահի կալվածքների գիտական ճյուղի պետ: Ընտրվել է ֆրանսիական ակադեմիայի թղթակից անդամ:
27. Նարկիլէճեան – Հակոբ, զինվորական դեղագործ, հանրային գործիչ, վերապրող:
28. Արսենեան – Ասատուր, դեղագործ, նահատակվել է Տեր Զորում:
29. Դանիէլեան Պ., փաստաբան – Պողոս, փաստաբան, դաշնակցական գործիչ, Եոզղատցի (?), նահատակվել է Տեր Զորի կողմերում:
30. Չերազ – Գասպար (1850-1928), փաստաբան, աքսորվել է մեծանուն եղբոր՝ Մինաս Չերազի փոխարեն, զինադադարին՝ վերադարձել Ուշագից, (հայրը՝ Վահան Չերազի), ջարդարարների դատավարության վկաներից էր, ապա՝ կորցրել է հոգեկան հավասարակշռությունը:
31. Մովսէս – Պետրոսյան, ուսուցիչ, դաշնակցական գործիչ, բուլղարահայ լինելով ազատվել և մեկնել է Սոֆիա:
32. Քէլէկ–խմբագիր – Տիգրան, Տիրան (1862-1915), «Սապահ» թերթի խմբագրապետը, ռամկավար ատենապետ, նահատակվել է Սեբաստիո Ալիս գետի (Գըզըլ ըրմաք) կամրջի մոտ, իբր՝ պատերազմական ատյան տարվելու ճանապարհին (ջրամույն է արվել):
33. Բ. Քէչեան – Բյուզանդ (1859-1928) «Բյուզանդիոն»-ի խմբագրապետը, դիմումով Պոլիս վերադարձած առաջին խմբից:
34. Թօփճեան – հավանաբար կրկնություն է N 7-ի, կամ՝ երկրորդ նույնազգանվանակրի համար համրիչը դեռ միակ աղբյուրն է:
35. Անտոնեան – Արամ (1881-1952), Չանղըրըից Էնկյուրի՝ սպանդ տարվող 2-րդ խմբից միակ փրկվածը՝ ոտքը կոտրվելով ճանապարհին թողնվելու պատճառով: Գրող, հրապարակախոս, խմբագիր, «Մեծ ոճիրը» վավերագրքի հեղինակը, Սողոմոն Թեհլերյանի դատավարության վկաներից:
36. Թոլայեան – Երվանդ (1883-1937), երգիծաբան, «Կավռոշ» թերթի խմբագիրը, դիմումով ազատված առաջին խմբից, զինադադարից հետո ունեցել է նաև թատերական գործունեություն (1918-1922-ին):
37. Շահնուր – Ներսես, կեսարացի, Բերայի Ս. Գր. Լուսավորչյան Կաթողիկե վարժարանի երիտասարդ ուսուցիչ, նահատակ:
38. Ս. Արենց – ուսուցիչ – Մարգիս Գըլճյան (Արենց), գրագետ, ուսուցիչ, խմբագիր, դաշնակցական գործիչ, վերապրող: Աքսորավայրից փախել է Գոնիա, ապա՝ Պոլիս:
39. Խոճասարեան – Հայկ, բազմավաստակ ուսուցիչ և հանրային գործիչ, ազգային երիսփոխան, վերապրող:
40. Վարուժան – Դանիել (1884-1915), բանաստեղծ, Բերայի Ս. Գր. Լուսավորչյան վարժարանի տեսուչ, դաշնակցական, նահատակել է 13/26.08. 1915-ին, Թյուներում, որդու ծնվելու օրը:
41. Շամտանճեան – Միքայել (1874-1926), ուսուցիչ, գրագետ, խմբագիր «Ոստան»-ի, թարգմանիչ, հանրային գործիչ, վերապրող, զինադադարին Ուշագից Պոլիս դարձած:
42. Չավուշեան - Երվանդ (1867-1916), ուսուցիչ, վերակազմյալ հնչակյան, վախճանվել է Համմամում (կայան՝ Եփրատի եզերքին, Մեսքենեի և Տեր Զորի միջև) Հուսիկ Քաջունի քահանայի հետ, նույն վրանում:

43. Թապագեան – Միհրան (1878-1915), ուսուցիչ, գրագետ, դաշնակցական, նահատակ:
44. Տխրունի - Արիս Իսրայելյան (1885-?), ուսուցիչ, բանաստեղծ, դաշնակցական, 1916-ի դրությամբ ծվարել էր Գունիայում:
45. Աղապապեան – Լեվոն (1887-1915), Բաղեշցի, թվագետ, խմբագիր, նահատակ:
46. Բարսեղեան – Արմենակ, Ներսիսյան ճեմարանն ավարտած, Բեռլինում փիլիսոփայություն ուսումնասիրած ուսուցիչ, Բերայի բնակիչ, դաշնակցական, վերապրող:
47. Տօրեան – Արմեն (Հրաչյա Սուրենյան) (1892-1915), բանաստեղծ, ուսուցիչ: Չանղրը է բերվել երկրորդ խմբի հետ, որտեղից Էնկյուրի՝ սպանդ է քշվել ու նահատակվել:
48. Եսայեան, տաղարտը – Գրիգոր (?):
49. Գոչո Արքին – Բեքմեզյան (?), Օրթաքեոյի հացավաճառ, նահատակել է Թյունեյում 13/26.08. 1915-ին:
50. Երջանիկ – Արամ «Երջանիկ» (1865-1915), գավառացի ձեռներեց, սեփականատերը՝ Պահճէ Գափուի համանուն ճաշարանի, ուր հավաքվում էին մտավորականներ և այլ գործիչներ (այդ պատճառով էլ՝ աքսորվել է): Նահատակ:
51. Զենոբ – համրիչը ղեռ միակ աղբյուրն է այս աքսորականի վերաբերյալ:
52. Խաչիկ – Պարտիզպանյան (?), Պերպերյան(?):
53. Հրանդ – Մելքոն Կյուրճյան (?):
54. Երևում – ծխախոտի մաքսանենգ, իր համարձակ կերպարով Վարուժանին այնքան զրաված մեկը, որ ուզում էր նրան բանաստեղծություն նվիրել. «Եվ իսկապես կարժեր», - նկատում է Արամ Անտոնյանը (համրիչի N 35 հատի անվանակիր):
55. Լետն-2 – Պարտիզպանյան եվ Գայրգճյան. առաջինը (1887-1915)՝ բժիշկ. Օսմանյան բանակում հարյուրապետի աստիճանի իր համազգեստով ձերբակալված և աքսորված: Հանրային գործիչ, դաշնակցական, վերապրող: Երկրորդը՝ վաճառական, որն իր Միհրան և Գեորգ եղբայրների հետ նահատակվել է Էնկյուրիում:
56. Ազրիկ – Քերեսթեճյան, ծնված Գարթալում (1855-1915), գյուղի «չօրպաճի»-ն և «Մէճլիսը Իտարէ»-ի ամդամ, ատաղձավաճառ, անկուսակցական:
57. Գանթարեան – համրիչը ղեռևս միակ աղբյուրն է:
58. Կոզմոս – համրիչն այս անձը վկայող ղեռևս միակ աղբյուրն է:
59. Պէյլերեան – Հակոբ, վաճառական, հանրային գործիչ, վերապրող, աքսորվել են հայր և որդի:
60. Թաշճեան – Կարապետ, վերապրող:
61. Հանեսեան – համրիչն այս անձը վկայող ղեռևս միակ աղբյուրն է:
62. Արամ – հավանաբար Օհնիկյան որդիներից մեկն է՝ տարագետ, վերապրող:
63. Մելիք – համրիչն այս անձը վկայող ղեռևս միակ աղբյուրն է:
64. Տէօվլեթեան – Կարապետ, փողերանոցի պաշտոնյա, հանրային գործիչ, վերապրող:
65. Քէհեաեան, արհեստաւոր – Վահան (Տէօքմէճի Վահան), ուրֆացի (1874-1915), Զեյթունի Պրունիի գործարանի ձուլող, հնչակյան, ամբաստանվել է ուժանակ պատրաստելու կասկածով, դատապարտվել

պատերազմական ատյանի կողմից, բանտից ազատվելով՝ աքսորվել է Չանղըրը, նահատակվել Թյունեյում՝ 13/26.08. 1915-ին:

66. Մաղազաճեան – Օննիկ (1878-1915), Պապը Ալի Ճատտէսի «Վաքան»-(«Հայրենիք») կազմատան տերը: Գումգափուի «Յառաջդիմասէր ընկերութեան» ատենապետ, նահատակվել է Թյունեում՝ 13/26.08. 1915-ին:

67. Պասմաճեան – Մանուկ, ճարտարապետ, մտավորական և հանրային գործիչ, վերապրող:

68. Մելքոնեան – Սիմոն, Օրթագեղեն, ճարտարապետ, վերապրող:

69. Զպճը – ճարտարապետ – կաթոլիկ (?):

70. Արսլանեան – առևտրական (?):

71. Վարդերես – մուխթար – Աթանասյան (1874-1916), Բերա, Ֆէրիքէօյի «մըխթար»-ը, վերակազմյալ հնչակյան, համրիչը փորագրող աքսորականն է, նահատակվել է Մեսքենեի կողմերում:

72. Ֆէրուխան – Բարունակ (1884-?), Ելեմտ նախարարության Մագրիքէօյի մասնաճյուղի պաշտոնյա, ջուրբակահար:

73. Մարաֆեան – Կարապետ (?):

74. Ալթունեան – Նույնանուն-ազգանվամբ երկուսն են եղել. մեկն ատամնաբույժ (համրիչի N 15-ի ազգանվանակիր), վերապրող, մյուսը՝ առևտրական, նահատակ:

75. Ճամպազ – Աբիկ, հայ-հոմեական՝ Բերայից, առևտրական, նահատակ:

76. Հրաչ – Հայկ Թիրեաքյան (1971-1915), ազգային երեսփոխան, դաշնակցական, նահատակվել է Էնկյուրիում, իր իսկ դիմումով փրկելով իր փոխարեն Այաշ աքսորված իր անուն-ազգանվանակից ծերունի նպարավաճառին:

77. Մոմճեան – ռուս հյուպատոսարանի թարգմանիչ, նահատակվել է Էնկյուրիի մոտ:

78. Գալէնտէր - Արամ Գալետերյան, օսմանյան դրամատան պաշտոնյա, հանրային գործիչ, դիմումով դարձած վերապրող:

79. Վաղինակ – Պարտիզպանյան, Շիրքեթի Խայրիեի պաշտոնյա, հանրայիյ գործիչ, վերապրող:

80. Գալֆաեան – պաշտօնեայ – Հարությունն (1870-?), թալասցի, պաշտոնյա, հորեղբորորդին՝ համրիչի N 26-ի անվանակրի, մինչ աքսորի օրը Մագրիքէօյի թաղապետության նախագահն էր, հասարակական գործիչ, հայտնի դաշնակցական:

81. Պէյլերեան – աքսորվել են հայր և որդի, վերջինիս վերաբերյալ տեղեկություն կա դիմումով ազատվելու մասին (հոր մասին տես՝ համրի N 59-ի ազգանվանակիր):

82. Պարոյր – Արգումանեան(?):

83. Նոյիկ – յանձնակատար – Տեր Ստեփանյան, երզնկացի, որի գերդաստանի քառասուն անդամները նահատակվել են: Աքսորվել է կուսակցականներին զենք հայթայթելու մեղադրանքով, վաճառական, վերապրող:

84. Թաքարեան – հայտնի են Ստ. անվանատառերը, հավանաբար՝ Ստեփան, առևտրական, վերադարձել է զինադադարից հետո Չանղըրը-Կեսարիա-Հալեպ ճանապարհը կտրելով:

85. Քէօլէեան – Գևորգ կամ Հովհաննես, Օհնիկյանների գործակիցը, նահատակվել է Էնկյուրիի մոտ:

86. Օհանիկեանք-4 – հայր և երեք որդիք. ա) հայրը՝ Գրիգոր, 75-ամյա տարիքում վախճանվել է Չանղըրում, բ) Արամ, տարրագետ, վերապրող. գ) Հովհաննես՝ վախճանվել է Պելեմետիկի մոտ՝ Հաճգըրի, դ) Մկրտիչ՝ նահատակվել է Տեր Զորում:
87. Թէրլէմէզ – սեղանատոր – Օհաննէս, վանեցի, դիմումով ազատվել է օգոստոսի 6-ին, Էնկյուրիում բանտարկվել, քշվել Տարսոն, Պոլիս է հասել 1915-ի սեպտեմբերի 22-ին:
88. Տէր Գէորգեան – Ներսես, վաճառական:
89. Պասմաճեան – Մկրտիչ, զինավաճառ:
90. Գայրգճեան – Միհրան, վաճառական, նահատակվել է Էնկյուրիում, աքսորվել են երեք եղբայրն իրար հետ. Լևոնը՝ հավանաբար, համրիչի N 55-ի անվանակիցներից մեկն է, Գևորգը՝ համրիչին չի արձանագրված, վերջիններս նույնպես նահատակվել են Էնկյուրիում:
91. Ինճիճեան – Գառնիկ, վաճառական, հանրային գործիչ, դիմումով վերադարձած:
92. Գարակէօզեան – Թագվոր(?):
93. Մանեասեան – Աստվածատուր, վաճառական, վերապրող:
94. Ղնչէկիլ – Խոնճեկուլյան, ակնոցի վաճառական, վախճանվել է Մեսքենեի կողմերում:
95. Փարիսեան – Արտաշես, վաճառական, վերապրող:
96. Յ. Գորեան-վճոկն. – Հակոբ, յոթանասունամյա ակնոցի վաճառական, երբեմն ուսուցիչ, աքսորից ազատվելու հրամանը հասել է 1915-ի օգոստոսի 6-ին, Էնկյուրիում բանտարկվել, քշվել է Տարսոն, որտեղից Պոլիս է հասել սեպտեմբերի 22-ին:
97. Քերոբեան, պատուելի – հուշագրություններում հանդիպում է միայն ազգանվան հիշատակմամբ:
98. Թումաճան – Սամուել Թումաճանյան, հնչակյան գործիչ, նահատակ:
99. Պալագեան ծ.վ. – Գրիգորիս ծայրագույն վարդապետ (1879-1934), թոքաթցի, փախուստը՝ Տեր Զորի ճանապարհից կայացել է 1916-ի ապրիլի 2-ին, հասել է Պելեմետիկ՝ կերպարանափոխ՝ ծպտվել Գյուստավ Բերնշտայն անուն ազգանվամբ, ապա իր անձնական գողգոթայով վերապրել: Սողոմոն Թեհլերյանի դատավարության վկաներից է: Կյանքի վերջին տարիներին ֆրանսահայ գաղութի հոգևոր առաջնորդն էր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Պալաքեան Գրիգորիս ծ. վարդ. Հայ Գողգոթան, հատոր Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1922: Այդ մասին տես՝ Ավագյան Կարինե. Անզուգական ցուցանմուշ, կամ՝ վերագտնված Մասունք, «Գարուն», 1995, թիվ 8, էջ 72-75:
[2] Թէոդիկ. Ամէնուն տարեցոյցը, Ազատ հայուն պզտիկ հանրագիտարանը, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, Կ. Պոլիս, տպագրութիւն Քէշիշեան Կ., էջ 255-256:
[3] Այդ մասին տես՝ Հայտ համայն սփյուռքին. «Ցուցանմուշ, որ որջ մի ժողովրդի ճակատագիր է արտահայտում», «Ազգ», 1995, դեկտեմբերի 28:
[4] Այդ մասին տես՝ «Գարուն», 1995, թիվ 11-12, էջ 36-37:
[5] Այդ մասին տես՝ «Ազգ», 1996, օգոստոսի 21:
[6] Հայ հանրագիտակ, խմբագրեց Հ. Մկրտիչ վարդ. Պոտուրեան Պարտիզակցի, 1938, թիւ 1, տպ. Պուքրէշ, 1938:

[7] Մտեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան (հայ մշակույթի գործիչներ), 3 հատորով, հ. Ա., Եր., «Հայաստան», 1973, հատոր Բ, Եր., «Սովետական գրող», 1981, հատոր Գ, գիրք 1, Եր., «Խորհրդային գրող», 1990:

[8] Հայկական սովետական հանրագիտարան (ՀՍՀ), հ. 1-12, Եր., 1974-1986, ՀՍՍՀ ԳԱ ՀՍ հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Հայկական հարց հանրագիտարան, Եր., 1996, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն:

[9] Հայկական հարց հանրագիտարան, Եր., 1996, էջ 411:

[10] Ազնավուրյան Գոհար. Անհայտ էջեր հայ նահատակների գրական ժառանգությունից, «Էջմիածին», 1965-Բ., էջ 49-51:

[11] Թէոդիկ. Յուշարձան Ապրիլ տասնըմէկի, I հրատ, Կ. Պոլիս, տպագրութիւն Արզուման Օ., 1919, էջ 15:

[12] Թէոդիկ. նույն հրատ., 1919, էջ 15, 47:

[13] Թէոդիկ. Ամէնուն տարեցոյցը, Ա-ԺԷ տարի, տպագրութիւն Վ. եւ Հ. Տէր Ներսէսեան, Քէշիշեան Կ., Յովակիմեան Մ., Կ. Պոլիս, 1907-1923, ԺԸ տարի, տպագրութիւն Թիւրապեան Յ. Բ., Փարիզ, 1924, ԺԹ տարի, տպագրութիւն Մխիթարեան հարց, Վիեննա, 1925, Ի տարի, Վենետիկ, Ս. Ղազար, Մխիթարեան տպ., 1926, ԻԱ տարի, Փարիզ, «Մասիս» տպ., 1927, ԻԲ տարի, Փարիզ, «Մասիս» տպ., 1928, ԻԳ տարի, Փարիզ, 1929:

[14] Թէոդիկ. Ամէնուն տարեցոյցը, ԺԶ տարի, տպագրութիւն Յովակիմեան Մ., Կ. Պոլիս, 1922, էջ 42, նաև՝ ԺԹ տարի, տպագրութիւն Մխիթարեան հարց, Վիեննա, 1925, էջ 87:

[15] Եղեռնի հետքերով, հրատարակչատուն Տօնիկեան Կ. եւ որդիք, Պէյրութ, 1969, էջ 18-19:

[16] Պալաքեան Գրիգորիս ծ. վարդ., նշվ. աշխ.:

[17] Թէոդիկ. Ամէնուն տարեցոյցը, ԺԶ տարի, տպ. Յովակիմեան Մ., Կ. Պոլիս, 1922, էջ 33-45:

[18] Թէոդիկ. Յուշարձան Ապրիլ տասնըմէկի, տպագրութիւն Արզուման Օ., Կ. Պոլիս, 1919, էջ 113-121:

[19] Շամտանճեան Միքայէլ. Հայ մտքին հարկը եղեռնին. Աքսորականի մտածումներ եւ զգացողութիւններ (Ազգային քաղաքական մատենաշար), տպագրութիւն Արզուման Օ., Կ. Պոլիս, 1919:

[20] 1915 - Աղէտ եւ վերածնունդ, աղետէն վերապրողներ, Փարիզ, տպագր., Արաքս, 1952, էջ 236-242:

[21] Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում, կազմեց և ծանոթագրեց Ա. Շարուրյանը, Եր., «Սովետական գրող» հրատ. – 1986, էջ 267-271:

[22] Թէոդիկ. Ամէնուն տարեցոյցը, Ժ-ԺԴ տարի, Կ. Պոլիս, տպագրութիւն Քէշիշեան Կ., 1916-1920, էջ 114-115:

[23] Համրիչին չկա նաև բողոքական գրածախ Պարոնեանի ազգանունը, որի մասին տեղեկանում ենք համրիչի N 41 հատի ազգանվանակիր Մ. Շամտանճյանի հուշագրությունից. Թէոդիկ. «Յուշարձան...», (Չանդրընէն վերյիշումներ, էջ 113):

[24] Թէոդիկ, «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի, էջ 115:

[25] 1915. Աղէտ եւ վերածնունդ, աղետէն վերապրողներ, Փարիզ, տպագր., Արաքս, 1952, էջ 239, 241-242:

[26] Թէոդիկ. Ամէնուն տարեցոյցը, ԺԵ տարի,Կ. Պոլիս, տպագրութիւն Յովակիմեան Մ., 1921, էջ 168:

[27] Թէոդիկ. Յուշարձան Ապրիլ տասնըմէկի, Կ.Պոլիս, տպագրութիւն Արզուման Օ., 1919, էջ 113:

[28] Թէոդիկ. Ամէնուն տարեցոյցը, Ժ-ԺԴ տարի,Կ. Պոլիս, տպագրութիւն Քէշիշեան Կ., 1916-1920, էջ 62:

[29] Թէոդիկ, նույնը, ԺԹ տարի, Վիեննա, տպագրութիւն Մխիթարեան հարց, 1925, էջ 79:

[30] Այդ մասին տես՝ նույն տեղում, էջ 80-83:

[31] Նույն տեղում, էջ 86:
[32] Նույն տեղում, էջ 87:
[33] Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Ալպոյաճյան Ֆ., արխիվ 44, թթ. 1,4:
[34] Նույն աեղում, թ. 4:
[35] ԳԱԹ, Վահան Թոգոմյանի ֆոնդ, թիվ 297-326, 330:
[36] ԳԱԹ, Արշակ Չոպանյանի ֆոնդ,թիվ 2464, 2466, I բաժին:
[37] Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում, Սովետական գրող, Եր., 1986:
[38] Նուն տեղում, էջ 233-235:
[39] Նույն տեղում, էջ 252:
[40] Նույն տեղում, էջ 255-259:
[41] Նույն տեղում, էջ 267-271:
[42] Նույն տեղում, էջ 271-274:
[43] Սիրունի Հ, Ճ. Կոմիտասին հետ, «Էջմիածին», 1965 NN Ա, Ե-Ժ, 1966 NN Ա-Զ, Ը-Ժ, 1967 NN Գ-Զ, 1968 NN Ա-Դ, Է-Ժ, 1969 N Գ:
[44] Թէոդիկ. Ամէնուն սարեցոյցը, Ժ-ԺԴ սարի, Կ. Պոլիս, 1916-1920, էջ 177-178:
[45] Բախչինյան Ա. Ծագումով հայ են, կենսագրական բառարան, Եր., «Ապոլոն» հրատ., 1993, էջ 305-306:
[46] Տեղեկատվությունը, ըստ համապատասխան փաստավավերագրի, ստացել ենք, այժմ հանգուցյալ սիկին Էժենի Աթանասյան-Գյուլբոլյանից, 1984 թվականին:
[47] Անդրէասեան Վազգէն. Վահան Չերազ եւ իր երգն Հայաստանի,Պէյրութ, սպ. Սեւան, 1977:
[48] «Քնարրան», 1996, թիւ 1-2, էջ 3, 1997, թիւ 1, էջ 3-5:
[49] Տես՝ Վերապրած մասունք կամ պատվիրան նահատակաց, «Քնարրան», 1999, թիւ 1-2, էջ 120-121:
[50] Պալաքեան Գրիգորիս ծ. վարդ. Նշվ. աշխ., Վիեննա, Մխիթարեան տպարան, 1922, էջ Դ, Ե:

Р е з ю м е

Уцелевшая реликвия: свидетельство Геноцида.

Карине Авакян

Историковедческий очерк посвящен результатам историко-документального исследования одного из уникальных экспонатов Гос. музея истории Армении. Это четки, на 99-и бусинках которого вырезаны имена или фамилии 103 представителей армянской интеллигенции Константинополя (в отдельных случаях имеются краткие сведения о них), которые, по заранее запрограммированному Геноциду армян, были арестованы 11/24 апреля 1915г. и сосланы в Чанкри.

Четки вырезал ссыльный Вардерес Атанасян. В дальнейшем четки – этот достоверный свидетель Геноцида, через Дер-Зор попал в Константинополь, хранился как семейная реликвия, затем был перевезен в Париж, далее – в 1965г. дочь мученика Эжени Атанасян-Гюльолян подарила реликвию Гос. музею истории Армении.

В результате историковедческих поисков автор статьи определил путь ссылки: с центральной тюрьмы Константинополя в Чанкри, оттуда ход к Дер-Зору, до Алепо.

На основе ряда документальных источников-свидетельств, памятных записок, мемуаров и т. д. сделана попытка установить личность каждого упомянутого на четках ссыльного, его дальнейшую судьбу.

Благодаря скрупулезным поискам произведены фактические уточнения событий Геноцида. Представлен именной указатель.

Summary

A Survived Relic or Documental Evidence of Genocide.

Karine Avakian

This historical and scientific essay is devoted to the results of historical and documental research of a unique exhibit in the State History Museum of Armenia. It's a worry–beads on the 99 pieces of which are engraved the names and surnames of 103 victims, who were only a part of the whole number of the intellectuals arrested in Konstantinople and exiled on April 11/14, 1915. Together with some of the names there is a brief information.

The worry–beads were engraved by an exile – Varderes Atanasian. Afterwards this evidence of Genocide passed a way from Polis to Paris as a family relic, then to Armenia, and in 1965 it was given to the State History Museum of Armenia by the exile – martyr's daughter Ezheni Atanasian-Gyulbolian.

As a result of the study of the subject, due to the rummaging about the original sources, the process of the exile is represented: from the central prison of Constantinople to the place of exile Changhri, and through the unbearable way of Der Zor as far as Aleppo.

On the basis of a number of documents and memories concerning the Genocide an attempt is made to determine the personality of each exile whose name is engraved on the worry–beads, and find out their further fate:

Due to the scrupulous rummage are made more precise definitions of the events concerning the question of Genocide. A brief information is represented as well.